

Է. Կ. ԼԱՎՁՅԱՆ

ՋՆԱԳՆԴՈՒ (*Viburnum opulus* v. *roseum*)
ԵՎ ՍՊԻՐԵԱ ԱՐԳՈՒՏԱՅԻ (*Spiraea arguta*) ԲԱԶՄԱՑՈՒՄԸ
ԱՄԱՌԱՅԻՆ ԿՏՐՈՆՆԵՐՈՎ

Ձնագնդին և սպիրեա արգուտան, որպես գեղեցիկ և վաղ ծաղկող թփեր շատ կարևոր են մեր քաղաքների և բնակավայրերի կանաչադարձման համար:

Այդ բույսերից առաջինը բոլորովին սերմ չի տալիս, երկրորդը տալիս է, բայց Երևանի պայմաններում դա ծլունակ չէ: Այս տեսակետից էլ այդ երկու տեսակները կտրոններով բազմացնելու հարցի պարզաբանումը կարևոր է: Հայտնի է (1), որ այդ բույսերի ամառային կտրոններով արմատակալման համար պահանջվում է 24° ջերմություն: Երևան քաղաքի պայմանները, որտեղ ամռանը ջերմաստիճանը ավելի բարձր է և օրվա որոշ ժամերին հաճախ հասնում է $30-36^{\circ}$ -ի, միանգամայն անբարենպաստ են նշված բույսերը ամառային կտրոններով բազմացնելու համար: Ուստի այդ տեսակները ամառային կտրոններով բազմացնելու նպատակով արմատակալման փորձը կատարել ենք սառը ջերմոցներում (1950—1951 թթ.): Համեմատաբար սառը պայմաններ ստեղծելու նպատակով ջերմոցներից մի մասի շրջանակի ապակիները սպիտակացվել են կրաշրի շաղախով, իսկ մյուսները պատվել մառլայով:

Ապակիները կրաշրիով պատած ջերմոցը օրվա ընթացքում ջրվել է 4 անգամ, իսկ մառլայով ծածկած ջերմոցում ցածր ջերմաստիճան ստեղծելու նպատակով մառլան միշտ պահվել է խոնավ վիճակում:

Կանաչ ճյուղերից կտրոններ վերցրել ենք դեռևս չփայտացած վիճակում մեկ միջհանգուցային տարածությամբ, երկու զույգ բողբոջներով:

Ուժեղ գոլորշիացումից խուսափելու նպատակով կտրոնի ներքևի և վերևի մասերում թողել ենք կիսով չափ կտրված մեկական տերև:

Փոքր միջհանգուցյ ունենալու պատճառով, սպիրեա արգուտայի կտրոնները վերցրել ենք մի քանի հանգուցյներով, թողնելով ներքևի մի տերև և գագաթինը:

Փորձի առաջին տարում կտրոնները մշակել ենք հետերոաուքսինի $0,02\%$ լուծույթի մեջ 4 ժամ տեղդությամբ, իսկ երկրորդ տարում $0,01\%$ լուծույթում 20 ժամ տեղդությամբ: Լուծույթից հանելուց հետո կտրոնները լվացել ենք մաքուր ջրով:

Թե՛ լուծույթում մշակված կտրոնները և թե՛ կոնսերվը տնկվել են մաքուր ավազով լցված արկիլների մեջ, առանձին-առանձին և դրվել վերը նկարագրված ջերմոցում:

Ջերմոցում օդի ջերմությունը չափվել է յուրաքանչյուր ժամը մեկ անգամ:

Փորձի ընթացքում առանձին ամիսների միջին ջերմությունը արտահայտված է աղյուսակ 1-ում:

Ինչպես տեսնում ենք մառլայով և սպիտակացրած ապակիով ծածկված ջերմոցների ամսվա միջին ջերմության տարբերությունը մեծ չէ և կազմում է 1—1,5°, Ինչպես ցույց են տվել մեր դիտողություններն օրվա մեջ, հատկապես կեսօրից հետո, սպիտակացրած ապակու տակ ջերմությունը միանգամից բարձրանում է 4—5 աստիճանով, մոտ 4 ժամ տևողությամբ, որը վատ է ազդում կտրոնների արմատակալման վրա: Անշուշտ դա էր պատճառը, որ մառլայով ծածկված ջերմոցում կտրոններն արմատակալեցին ավելի բարձր տոկոսով, մինչդեռ սպիտակացված ապակիով ծածկված ջերմոցում մեծ մասը չորացավ:

Աղյուսակ 1

Ամիսները	Մառլայով ծածկված ջերմոց	Սպիտակացր. ապակիով ծածկված ջերմոց
Մայիսին	19°	20°
Հունիսին	21,5°	22,8°
Հուլիսին	28,4°	30,0°
Օգոստոսին	28,0°	29,5°

Արմատակալման լավագույն ժամկետը պարզելու նպատակով կտրոնները վերցրել ենք տարբեր ժամկետներում (աղյուսակ 2):

Ինչպես երևում է աղյուսակի տվյալներից, մառլայով ծածկված ջերմոցում կտրոններն արմատակալել են ավելի բարձր տոկոսով:

Այսպես, օրինակ՝ հետերոաուքսինով մշակած ձնադնդին սպիտակացված ապակու տակ արմատակալել է 40%-ով, 55 օրվա ընթացքում, իսկ մառլայով ծածկված ջերմոցում՝ 32%-ով, 49 օրվա ընթացքում:

Աղյուսակի տվյալներից երևում է նաև, որ կտրոնների արմատակալման համար մեծ նշանակություն ունի կտրելու ժամկետը: Օրինակ, *Viburnum opulus* V. *roseum*-ի մայիսի 6-ին վերցված կտրոնները արմատակալել են 100%-ով, իսկ նույն ամսի 19-ին վերցվածը՝ 35%-ով: Նույնը կարելի է ասել նաև *Spiraea arguta*-ի վերաբերյալ:

Այստեղից պարզ է, որ կտրոն վերցնելու ժամկետը կարևոր նշանակություն ունի նրա արմատակալման համար:

1950 թ. այսպիսի փորձեր կատարվել են նաև ջերմոցում: Այսպես, *Viburnum opulus* V. *roseum*-ից մայիսի 8-ին վերցված կտրոնները մշակված հետերոաուքսինով արմատակալել են 30%, 40 օրում, կոնտրոլը՝ 40%, 40 օրում, մայիսի 25-ին վերցված կտրոնները, որոնք նույնպես մշակել ենք հետերոաուքսինով, արմատակալել են 13%-ով, 38 օրում, իսկ կոնտրոլը՝ 40%, 38 օրում:

Spiraea arguta-ի մայիսի 8-ին վերցված կտրոններն առանց հետերոաուքսինի արմատակալել են 15%, 35 օրում, իսկ մայիսի 30-ին վերցվածները բոլորովին չեն արմատակալել:

Կտրոնների արմատակալումը 1950—1951 թթ.

Բույսի անունը	Ժամանակը	Մշակման ժամկետը	Մասնավոր ծածկված ջերմոց				Սպիտակացրած ապահով ծածկված ջերմոց				Մշակման ընթացքի և արդյունքի նկարագրություն	Մշակման ընթացքի և արդյունքի նկարագրություն
			հետերոթս.		կոնտրոլ		հետերոթս.		կոնտրոլ			
			Մարտ	Մայիս	Յուլի	Սեպտեմբեր	Մարտ	Մայիս	Յուլի	Սեպտեմբեր		
Viburnum opulus v. roseum	25 6/6	32 49	12 70	4 55	— 0	— 0	4 55	— 0	— 0	4 55	0,02	0,02
Spiraea arguta	25 21/6	0 0	0 0	0 0	0 0	0 0	0 0	0 0	0 0	0 0	0,02	0,02
" "	25 6/6	20 55	36 55	0 0	0 0	0 0	0 0	0 0	0 0	0 0	0,02	0,02
" "	25 9/6	52 51	24 51	4 28	0 0	0 0	4 28	0 0	0 0	4 28	0,02	0,02
" "	25 10/6	56 38	60 38	44 38	28 28	28 28	44 38	28 28	28 28	4 55	0,02	0,02
" "	25 1/7	0 0	0 0	0 0	0 0	0 0	0 0	0 0	0 0	4 55	0,02	0,02
1951 թ.												
Viburnum opulus v. roseum	25 6/5	100 67	51 67	0 0	0 0	0 0	20 5	0,01	0,01	20 5	0,01	0,01
" "	25 16/5	90 25	100 58	0 0	0 0	0 0	20 5	0,01	0,01	20 5	0,01	0,01
" "	25 19/5	35 44	20 62	0 0	0 0	0 0	20 5	0,01	0,01	20 5	0,01	0,01
Spiraea arguta	20 20/4	30 40	0 0	10 20	0 0	0 0	20 5	0,01	0,01	20 5	0,01	0,01
" "	26 16/5	6 0	20 78	0 0	0 0	0 0	20 5	0,01	0,01	20 5	0,01	0,01
" "	20 22/5	20 32	15 52	0 0	0 0	0 0	20 5	0,01	0,01	20 5	0,01	0,01
" "	20 30/5	60 25	25 62	0 0	0 0	0 0	20 5	0,01	0,01	20 5	0,01	0,01

Մեր կատարած փորձերից կարող ենք դալ հետևյալ եզրակացություն.

1. Կոնտրոլի հետ համեմատած, սպիրտակարգած ապահով և մասնավոր ծածկված ջերմոցներում հետերոթսիսով մշակված կտրոններն արմատակալում են բարձր տոկոսով, ավելի կարճ ժամանակամիջոցում և տալիս են ուժեղ զարգացած արմատներ:

2. Նշված բույսերից կանաչ կտրոնները պետք է վերցնել ճյուղերի հասունացման սկզբին, քանի որ արդեն հասունացած կտրոնները չեն արմատակալում:

Բուսարանական այգու պայմաններում Viburnum opulus V. roseum-ի կտրոնները պետք է վերցնել մայիսի առաջին կեսերին, spiraea arguta-ն՝ երկրորդ կեսերին, իսկ Նրեանի համար 10—15 օր ավելի շուտ:

3. Նրկու տարվա ընթացքում կատարված փորձերը մեզ բերել են այն համոզման, որ նշված բույսերի կանաչ կտրոնները մասնավոր տակ արմատակալում են ավելի բարձր տոկոսով, քան սպիրտակարգված ապահով տակ, որտեղ նրանց մեծ մասը չորանում է:

Արտադրական մասշտաբով բազմացնելու համար անհրաժեշտ է օգտագործել մասնավոր ծածկված ջերմոցներ:

Э. К. ЛАВЧЯН

Размножение бульденежа и спиреи аргута летними черенками

Р е з ю м е

Внедрению высокодекоративных кустарниковых растений—бульденежа и *Spiraea arguta*—в практику озеленения Еревана препятствует трудность их размножения. Бульденеж вообще не дает семян, а спирея аргута дает невсхожие семена. В связи с этим бульденеж обычно размножают отводками, а спирею аргута—зимними черенками. Проведенные в течение 1950—1951 гг. опыты имели целью добиться укоренения летних черенков этих двух видов и тем самым содействовать их форсированному размножению. Опыты проводились в холодных парниках. В результате установлено следующее:

1. В случае покрытия парниковых рам марлей укоренение происходит более успешно, в сравнении с тем вариантом опыта, в котором применялась побелка рам.

2. Применение гетероауксина повышает процент укоренения. Укореняемость обработанных гетероауксином летних черенков бульденежа достигала до 100%, а спиреи аргута—до 60% в парниках покрытых марлей.

3. В условиях Ереванского ботанического сада лучшим сроком взятия летних черенков является первая половина мая для бульденежа и вторая половина мая—для спиреи аргута. В условиях г. Еревана черенкование следует производить на 10—15 дней раньше.